

կ'ընթանայ երկրէ հարիւր մէկը բարձրութեամբ, եարծեա թէ երկու, երեք վայրկենէն, կամ այն դաշտին, կամ մացառին ճամբուն վրայ կանգ պիտի առնու օդապարիկը. սակայն ժամանակը կը քառապատկի, ետէն վազող անձինք շնչասպառ վար կ'իյնան և կը յուսահատին այլ ևս հասնելու խաբերայ օդապարիկին. շատերը բարկացած կ'անգ կ'առնուն և կ'սկսին սուլել և աղաղակել, իսկ ոմանք քաջերէն դեռ կը շարունակեն ընթացքնին. մենք ալ զուարճալի տեսարանը կը կորսնցունենք:

Դեռ 40 մէկը բարձրէն՝ հօտար խաբսխին չուանը նետեց, Հարիւր հոգի մեծ և փքր փութացին բռնել այն չուանը.

— Ազատ թողուցէ չուանը, կ'աղաղակէր հօտար բարկացած և Շատերը հեռացան, բայց երկու հոգի յամառութեամբ չէին թողուր:

— Նայեցէ՛ք զձեզ վեր կը քաշենք, աղաղակեցի ես: Մոգական արդիւնք մը յառաջ բերին այս խօսքերս. — երկու գիւղացիք զարհուրած իսկոյն թողուցին չուանին ծայրը, երբ օդապարիկը տեղաւորուեցաւ՝ հրաման տուինք գիւղացւոց որ բռնեն ուժով չուանը. հօտար ապահովութեան դռնակը բացաւ և բոլոր կազը ցնդեցաւ:

— Ամէն բան լմացաւ, աղաղակեցի օդապարիկին գետին նստած ժամանակ.

— Այո, լմացաւ, պատասխանեց հօտար:

Հացկերոյք մը ջրոյ աւակ. — Կիօտատի (Ciutat) նաւահանգստին խորագոյն փորելու աշխատութիւնքն լմացան վերջին ատեններս և նոյն պատեհաւ՝ այս ձեռնարկութեան առաջնորդն Պ. Բոպէրդ, մեծահաց նախաճաշ մը տուաւ գործաւորաց և իրենց վրայ հսկողաց: Յիրաւի նորօրինակ գործ մ'էր. սեղանն ծովուն երեսէն ութ մեկը խոր էր, նաւահանգստին հիման վրայ, մեծ արկեղ մը մէջ յորում գործաւորք կ'աշխատին. այս արկեղ նուրբ պատերն միայն կը բաժնէին զհրաւիրեալսն ջրոց ահաւոր կոյտէն, որ կը ճնշէր չորս կողմէն: Այն նորագիւտ սեղանատունն փառաւորապէս լուսաւորեալ և զարդարեալ էր, և առանց ականջաց չլլման՝ զոր կը պատճառէր արկեղ մէջ դանուած ճնշումը, որպէս զի ջուրն յանկարծ ներս չի յարձակի, բազմականք պիտի չի տարակուսէին ամենին թէ գոյզն ինչ յապաղումն օդային ջրհանին գործողութեան, զամէնքն ալ նոյն վայրկենին մէջ պիտի խեղդէր:

Յետ սեղանին, անակնկալ հանդէս մ'ալ կատարեցին երգի. հանդիսադրութիւնն տեսց յետ մինչև միջօրէի մեծագոյն մասը. և հուսկ յետոյ բազմականք օդային մթնոլորտին վրայ երեցան:

Փողպատ — Լոռսանկար. Արագահան լուսանկարին յառաջադիմութիւնը և գիւտերը՝ դեռ մինչև երբ պիտի շարունակեն. Գիտնականք,

մասնաւորապէս Պ. Մարէյ կ'աշխատին միշտ նորանոր գիւտեր ընելու, այս գիւտերը գլխաւորաբար կը կայանան լուսանկարին գործիքները երազելու և փորկրացնելու, որով ամէն մարդ կարող ըլլայ լուսանկարել առանց իմացուելու: Որդէն ընթերցողաց ծանօթ է լուսանկար գիտակը և լուսանկար գլխարկը, բայց ահաւասիկ ուրիշ նոր գիւտ մը որ մեծագոյն յաջողութիւն և տարածումն պիտի ունենայ. այս գիւտը կը կայանայ երկայն փողպատի մը և նորա գընդադոյն վրայ. գնդասեղը առարկայատես ապակի մ'է, իսկ երկայն փողպատը՝ միմասնեակ մը: Երբ անձ մը մերձենայ քեզի 50 հարիւրորդամեզը կամ նոյն իսկ մի մեզը հեռաւորութեամբ՝ գրպանիդ մէջ գտնուած անտես գաուչուէ տանձաձև գունտը կը սղմես և իսկոյն խօսակից անձիդ դէմքը կ'ունենաս:

Այս հանճարեղ փորրիկ գործիքը՝ Պ. Ատմոնտ Պլիսի գիւտն է. առաջին անգամ ուսումնականաց ընտիր ժողովի մը ներկայութեամբ կատարեց իր փորձերը՝ և ընդհանուր հաւանութեան և զարմանաց արժանացաւ:

Սրաւտոռքիւն կենդանեաց. — Այս բանիս վրայ պատմուած դէպքերը՝ անթիւ են, բայց այս սրամտութիւնը մասնաւորապէս կը դիտուի շնորու վրայ. ահաւասիկ այսպիսի նոր դէպք մը որ թէ ամենաստոյգ է, և թէ շատ հետաքրքրական: Զեմիրա. անուամբ շուն մը ընտանեաց մը քով կ'ապրէր, ուր ամենայն ինամբով զինքը կը պահէին. այս շունը ձագ մը ունեցաւ որուն անունը Ժոյի դրին: Զեմիրա օր մը սաստիկ մշուշով դուրս ելնելով, բոլորովին կուրացաւ, և ընդդէմ ամենայն ինամոց ընտանեաց և դեղերու՝ միշտ կոյր մնաց: Տէրերը տեսնելով որ այլ ևս իրենց չի կրնար ծառայել՝ ձագը քովերնին պահեցին, և զինքը տնէն քանի մը քիլոմէթր հեռու եղող ընտանեաց մը տուին: Քանի մը ամիս այսպէս անցաւ, և Զեմիրի վրայ ամենին տեղեկութիւն չունէին: Օր մը երեկոյեան դէմ շատ զարմացած ընտանեաց ամէն անդամը՝ տեսնելով որ Զեմիր եկեր և իրենց տանը մէջ գտնուած խոտի դէզի մը վրայ նստեր է արիւնաներկ թաթերով, կենդանոյն սիրոյ և երախտագիտութեան տուած ցոյցերը՝ ոչ ոք կրնայ բացատրել. ամէն մարդ գիտէ քիչ շատ թէ այսպիսի պարագայից մէջ շուն մը որչափ կրնայ թքնիլ. զամէնքն ալ կը հռտուրտար և կը սիրէր, մասնաւորապէս կը փայփայէր իւր Ժոյի ձագը՝ որ փոխադարձ իւր մայրը ճանչնալով սիրոյ ցոյցերուն կը համապատասխանէր: Ինչպէս կրնանք մեկնել այս զարմանալի դէպքը. կենդանի մը որ աչքէն զրկուած, 6, 7 քիլոմէթր հեռացած իւր սովորական տնէն և այն ալ մի անգամ գոց կառքով, կարենայ դարձեալ գալ իւր հին տէրերը գտնել:

Նոր պեղումներ 'ի Պոմպէա : — Հնախօսաց մէջ ամենէն աւելի ծու-
նէր խնդրոց մին է որոշել ճիշդ այն տարւոյն ամիսը՝ յորում հանդի-
գիպեցաւ վեսուվի ահաւոր ժայթքումը՝ որ կ'ործանեց զՀերկուլանոն,
զՊոմպէա և զայլ մերձակայ քաղաքս :

Պլինիոս կրտսերոյն նամակները, որ ըստ իրեքան այսպիսի մեծ գէպ-
քի մը ամենայնչին պտրագաներն իսկ պէտք էին յիշել միմեանց
հակասականք են. ոմանց մէջ կ'ըսէ թէ Օգոստոս 24ին հանդիպե-
ցաւ, «ւրիշ տղեր ալ 23 Նոյեմբերի, Համբաւաւոր հնախոյքը՝ ինչ-
պէս Ռոգինի, և Ռուճճիէրօ, գտած առարկայից վրայ հաստատելով
իրենց կարծիքը՝ վերջին ամիսը ընդունեցան. ընդհակառակն Պ. Ման
առաջինը ընդունեցաւ. Նոր գիւտ մը իտալացի գիտնականաց կար-
ծիքը հաստատեց : Սքապիանա գրան մօտ երեք Նոր գիականք գըտ-
նուեցան, երկուքը առն, մին կնոյ : Այս գիւտէն վերջը Նորագոյն
մ'ալ եղաւ. այսինքն երեք մէկը բարձրութեամբ և 40 հարիւրամէտր
տրամագծով ծառի բուն մը գտնուեցաւ. այս բունը յիշեալ գիա-
կանց ամենամօտ գտնուեր է. այս բնոյն վրայ յայտնի կը տեսնուին
ծառին խաւերը և ճիւղերու բաժանման կեդրոնները : Այս ծառին
որ կ'անուանուի (*laurus nobilis*) պտղոց յետքը յայտնի է հողին վը-
րայ. արդ այս ծառը իւր պտուղները աշնան կու տայ՝ հետեաբար Նո-
յեմբերի մէջ հանդիպած է և Պլինիոսի երկրորդ անգամ այս ամիսը
յիշելը՝ կարծես թէ սրբագրութիւն է առաջնոյն :

Գիշաւոր տէրոտքեանց օրագիրք. — Վերջին ատեններս հետա-
քըքքրական հաշիւ մը եղաւ օրագրոց վրայ. այսինքն միջին հաշիւ
ըրին օրագրոց թուոյն և ժողովրդեան մէջ ամենայն Տէրութեանց
մէջ. և գտան որ Միացեալ Նահանգաց մէջ 1 օրագիր կը համապա-
տասխանէ 4,488 բնակչաց, ի Զվիցցէրի 1 առ 5,073. ի Տանիմար-
գա 1 առ 6,022. ի Գերմանիա 1 առ 9,474. ի Մեծն Բրիտանիա 1
առ 11,409. ի Շուէտ 1 առ 13,120. յԱւստրիա 1 առ 14,832. յի-
տալիա 1 առ 20,356. յՌուսկարիա 1 առ 24,543. ի Ռուսաստան 1
առ 109,611 :